

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-1 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքների (1-ին փուլ 2-րդ մաս) կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 11.10.2019թ. N 665/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.10.2019թ. ժամը 17-30-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:  
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գրիգորյանը, Կ.Բայբուրտյանը և քարտուղար Ս.Հարությունյանը:

### Օրակարգ

#### Հայտերի բացման և գնահատման մասին

- ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը տեղեկացրեց, որ ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-1 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար ՀՀ կառավարության սեպտեմբերի 9-ի N 1253-Ն և հոկտեմբերի 10-ի N 1374-Ն որոշումների համաձայն 14.10.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր տրամադրվել՝ «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ին (ՀՀ ք. Երևան, Արաբկիր 39 փող. 2 շենք 32 բն., էլ. փոստ՝ shinindustria-gtk@yandex.ru):
- ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-1 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:  
- քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:  
- գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝  
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.  
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.  
**«ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ**

Չափաբաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Առաջարկված ընդհանուր գինը՝ առանց ԱԱՀ-ի	Առաջարկված ընդհանուր գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	Նախահաշվային գինը
1	Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքների (1-ին փուլ 2-րդ մաս) կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ	6 500 000	6 500 000	7 864 000

#### գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին ներկա էր «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ի տնօրեն Կ.Շավարշյանը, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման հրավերի 7.5 կետի 1-ին մասի պահանջներին համապատասխան «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ին հրավիրել մասնակցելու գների նվազեցման համար բանակցությունների:

Բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտին «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը թողեց անփոփոխ:


3. Որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ին՝ ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

4. Գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

-առաջին տեղը զբաղեցրած «ՇԻՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ԳՏԿ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ներկայացնել առաջարկ ընտրված մասնակցին՝ պայմանագիր կնքելու համար:


Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝



Ն.Մնոյան

Անդամներ՝



Ա.Գրիգորյան



Կ.Բայբուրտյան

Քարտուղար՝



Ս.Հարությունյան